

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

15.06. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Ա.Զանազյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը,
Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը,
Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝

Ամենօրյա աշխատանքներ իրականացնել սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ կիսամյակային պլանային առաջադրանքների կատարման նպատակով:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և ներկայացնել տեղեկատվություն բուժհաստատություններում տեղ գտած թերությունների վերացման և դրանցում մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Զանազյանին՝

1-ամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն հավաքագրված աշխատուժի շարժի և զբաղվածության վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

Մինչև ս/թ հուլիսի 1-ը ներկայացնել համեմատական տեղեկատվություն քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների վերաբերյալ 2018-2019թթ-ի և 2020 թ-ի առաջին կիսամյակի կտրվածքով:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն արհեստական խոտաձածկով մարզադաշտերի վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Դսեղ համայնքի ոռոգման ցանցի վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ս.Գրիգորյանին՝

Մինչև ս/թ հուլիսի 1-ը ներկայացնել տեղեկատվություն վկայագրման ենթակա երեխաների առողջական վիճակի մակարդակների վերաբերյալ:

 Invalid signature



ԱՆԴԻԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ